ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՀ-ում 2022թ. հոկտեմբերի երկրորդ տասնօրյակում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Հոկտեմբերի 13-18-ին շրջանների զգալի մասում դիտվել է անձրև: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Մարտունիում՝ 12մմ, Ստեփանակերտում՝ 8մմ, Ասկերանում՝ 6մմ, Մարտակերտում՝ 5մմ:

Օդի միջին տասնօրյակային ջերմաստիճանը Ստեփանակերտում եղել է +14.2^{0}C, նորմայից բարձր 2.5 ^{0}C-ով, Ասկերանում՝ 15.4^{0}C, Մարտունիում՝ 15.8^{0}C նորմայից բարձր 2.1^{0}C-ով, Մարտակերտում՝ 17.2^{0}C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հոկտեմբերի 11-ին՝ +24...+29^{0}C, Ստեփանակերտում հոկտեմբերի 20-ին՝ 23^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հոկտեմբերի 13-ին և 15-ին՝ +9... +11^{0}C:

Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակում քամու միջին արագությունը հասել է 1-2 մ/վրկ, պոռթկումները մինչև՝ 9-12 մ/վրկ արագությամբ:

Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակում օդի միջին հարաբերական խոնավությունը կազմել է 78 %: